ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/7-3

ք. Մասիս « 03 » հուլիսի 2025թ.

Մասիս համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար Դավիթ Համբարձումյանի, որը գործում է համայնքի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՎԷՀ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ" Հակոբյանի, և <<ԴԸ ԲԵՍՏ ՇԻՆ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Թադևոսյանի, որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների և 10.06.2025թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Մասիս համայնքի Հայանիստ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի մասնակի վերանորոգման և ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/7 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալատուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ժամկետը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել 10 օրվա ընթացքում:Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալատուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը,

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **9 990 000 (ինը միլիոն ինը հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ**, որից 1 665 000 (մեկ միլիոն վեց հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

Ընդ որում, հիմք ընդունելով 10.06.2025թ. կնքված համատեղ գործունեության պայմանագիրը՝ կատարված և սահմանված կարգով ընդունված աշխատանքների դիմաց վճարումները կատարվելու են <<ՎԷՀ>> ՍՊԸ ընկերության՝ սույն պայմանագրում սահմանված հաշվի համարին:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Շինարարական հրապարակի ոչ պատշաճ՝	
1⍰1	կազմակերպում	0,2%
1⍰2	կահավորում	0,2%
2	Անվտանգության տեխնիկայի կանոնների չպահպանում	1.0%
3	Սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանում	0,2%

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին

ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Մասիսի համայնքապետարան
ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900 432 131 036
ՀՎՀՀ 04240324

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՎԷՀ» ՍՊԸ
Արարատի մ., ք. Վեդի, Ն. Ստեփանյան 19
ԱԿԲԱ Բանկ ԲԲԸ
Հ/Հ 220123331195000
ՀՎՀՀ 04234908

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԴԸ ԲԵՍՏ ՇԻՆ» ՍՊԸ
գ. Գոռավան, Վ. Սարգսյան 49
«Արդշինբանկ» ՓԲԸ, Նոր Նորք մ/ճ
Հ/Հ 2472401738040000
ՀՎՀՀ 04230433

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
« 03 » հուլիսի 2025թ. կնքված
ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/7-3 ծածկագրով պայմանագրի

Չափաբաժին 3
Ծավալաթերթ-նախահաշիվ

Մասիս համայնքի Հայանիստ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի մասնակի վերանորոգման և ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքների կատարման

NN	ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐԸ	ԾԱԿԱԼԸ	1 ՄԻԱՎՈՐԻ ԱՐԺԵՔԸ /հազ. Դրամ/	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԺԵՔԸ ՀԱԶ. ԴՐԱՄ
1	2	3	4	5	6	16
		ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՈՒՄ				
1	11-178	Պատերի բարելավված գաջե սվաղում УЛУЧШЕННАЯ гажевая штукатурка стен	մ2 / м2	62,000	2,873	178,146
2	E15-660	Պատերի բարելավված ներկում լատեքսային ներկով, քսահարթումով Улучшенная латексная окраска стен	մ2 / м2	571,140	1,245	711,139
3	15-262	Պատերի բարելավված ցեմենտավազե սվաղում Улучшенная штукатурка стен цементным раствором внутри зданий	մ2 / м2	10,500	2,317	24,333
4	13-137	Պատերի երեսպատում հախճասալերով Облицовка стен из керамических плиток	մ2 / м2	10,500	5,717	60,028
5	34-323 34-353	Առաստաղների երեսպատում գիպսակարտոնով սալերով 9.5մմ հաստության	մ2 / м2	156,160	12,449	1944,014

		Обшивка потолка гипсокартонными панелями толщиной 9,5 мм				
6	շուկա	Առաստաղի մոլդինգ Потолочный плинтус	գմ / пм	177,700	0,288	51,220
7	4-86	Պլաստիկ սալերից կախովի առաստաղի իրականացում Устройство подвесного потолка из пластиковой плитки	մ2 / м2	2,760	6,452	17,807
8	ինֆ տեղ/пр. лист	Կախովի առաստաղի պրոֆիլ Профиль подвесного потолка	գմ/пм	6,900	0,173	1,193
9	E15-661	Առաստաղի բարելավված ներկում լատեքսային ներկով, քսահարթումով Улучшенная латексная окраска потолков	մ2 / м2	156,160	1,430	223,343
10	Ինֆ. Տեղ.	Մետաղապլաստե դռան տեղադրում, 60մմ հաստ., ապակեպատ, հայկական պրոֆիլ Монтаж металлопластиковой двери, толщиной 60 мм, армянский профиль	մ2/м2	3,680	45,639	167,950
11	11-55 11-56 գ=2	Պատուհանագոգերի հարթեցում ցեմենտավազային շաղախով 30մմ հաստությամբ Выравнивание подоконников цементно-песчаным раствором толщиной 30 мм	մ2 / м2	1,350	1,480	1,998
12	Ինֆ. Տեղ.	Պլաստմասե պատուհանագոգի տեղադրում մինչև 35սմ լայնությամբ Установка пластикового подоконника шириной до 35 см	գմ / пм	4,500	2,882	12,971
13	15-277	Բացվածքների թեքությունների բարելավված սվաղում գաջե շաղախով Улучшенная штукатурка откосов гипсовой штукатуркой	մ2 / м2	7,920	5,007	39,652
14	15-660	Բացվածքների թեքությունների բարելավված ներկում լատեքսային ներկով Улучшена покраска откосов латексной краской	մ2 / м2	7,920	1,245	9,861

15	6--13	Աստիճանավանդակի վերանորոգում B15 դասի բետոնով Ремонт лестничной клетки бетоном класса B15	մ3 / м3	0,100	35,782	3,578
16	շուկա	Պողպատե ցանց армирующей сетка	մ2/м2	18,500	0,144	2,666
17	11-135	Աստիճանավանդակի երեսպատում պրեսգրանիտե սալերով /չսահող/ Устройство покрытий из плиток пресгранита для полов	մ2 / м2	18,500	9,631	178,166
18	շուկա	Աստիճանների մետաղական բազրիքների տեղադրում չժանգոտվող մետաղից /գործարանային արտադրության/ Монтаж металлических перил на лестнице	գմ/пм	7,600	14,412	109,532
19	23-77 Գնաց 3	Շին աղբի կուտակում, դուրս բերում շենքից, բարձում ա/մեք վրա և տեղափոխում Сбор строй мусора, вывоз из здания, погрузка на самосвалы и вывоз	տ / т	3,000	5,658	16,973
					Ընդամենը	***3754,573***
					գոկոսը ամբողջի համար	***29,20%***
		ՋԵՌՈՒՑՈՒՄ				
1	E18-71	Պատի ջեռուցման կաթսայի տեղադրում, փակ այրման, 28 կՎտ Монтаж котла настенного отопления, закрытого горения, с дымоходом, 28 кВт	լրակազմ	2,00	86,751	173,502
2	E18-165	Ջեռուցման շրջանառու պոմպի տեղադրում УСТАНОВКА НАСОСОВ ЦЕНТРОБЕЖНЫХ	հատ / шт	2,00	24,774	49,547
3	E16-134	Զտիչի տեղադրում Ф32մմ Установка фильтра	հատ / шт	4,00	5,238	20,951
4				4,00	3,483	13,932

	ինֆ տեղ/պր. лист	Անցում /ամերիկանկա/ Ф32մմ Переход / американка / Ф32 мм	հատ / шт			
5	E16--134	Փականի տեղադրում Ф32մմ Установка крана Ф32 мм	հատ / шт	8,00	5,132	41,059
6	E16--134	Փականի տեղադրում Ф20մմ Установка крана Ф20 мм	հատ / шт	4,00	4,941	19,763
7	E18-112	Այլումինե ջեռուցման մարտկոցների տեղադրում Монтаж алюминиевых радиаторов отопления	էկմ/экм	57,20	0,968	55,379
8	ինֆ տեղ/պր. лист	Այլումինե ջեռուցման մարտկոց H=500մմ Радиатор отопления алюминиевый H = 500мм	հատ / шт	286,00	5,765	1648,740
9	շուկա/рынок	Մարտկոցի կախիչ Подвеска для радиатора	լրակ. /комп	26,00	1,417	36,834
10	ինֆ տեղ/պր. лист	Մարտկոցի վերին փական Верхний клапан	հատ / шт	26,00	2,998	77,940
11	ինֆ տեղ/պր. лист	Մարտկոցի ներքին փական Нижный клапан	հատ / шт	26,00	2,998	77,940
12	շուկա/рынок	Օդհանիչ 1/2 Воздухоотводчик 1/2	հատ / шт	26,00	5,044	131,150
13	շուկա/рынок	Խցափակիչ 1/2 Заглушка 1/2	հատ / шт	26,00	0,241	6,258

14	E16-261	Պոլիպրոպիլենային, ալյումինե շերտով, PN 10, d=20x3.0 մմ խողովակների մոնտաժում ПРОКЛАДКА ТРУБОПРОВОДОВ ИЗ ПОЛИЭТИЛЕНОВЫХ ТРУБ PN 10, d=20x3.0 мм	գմ/пм	86,00	4,196	360,878
15	E16-262	Պոլիպրոպիլենային, ալյումինե շերտով, PN 10, d=25x3.5 մմ խողովակների մոնտաժում ПРОКЛАДКА ТРУБОПРОВОДОВ ИЗ ПОЛИЭТИЛЕНОВЫХ ТРУБ PN 10, d=25x3.5 мм	գմ/пм	172,00	3,864	664,634
16	E16-263	Պոլիպրոպիլենային, ալյումինե շերտով, PN 10, d=32x4.0 մմ խողովակների մոնտաժում ПРОКЛАДКА ТРУБОПРОВОДОВ ИЗ ПОЛИЭТИЛЕНОВЫХ ТРУБ PN 10, d=32x4.0 мм	գմ/пм	70,00	3,786	265,026
17	շուկա/рынок	Մեկուսիչ խողովակի Φ32 խողովակի համար Теплоизоляция труб Φ32	գմ/пм	12,00	0,317	3,805
18	ինֆ տեղ/ пр. лист	Փոխակերպիչ Φ32/Φ25 ПЕРЕХОД Φ32/Φ25	հատ / шт	8,00	0,120	0,957
19	ինֆ տեղ/ пр. лист	Անկյունակ 90° Φ20մմ УГОЛОК 90° Φ20	հատ / шт	218,00	0,062	13,510
20	ինֆ տեղ/ пр. лист	Անկյունակ 90° Φ25մմ УГОЛОК 90° Φ25	հատ / шт	20,00	0,091	1,816
21	ինֆ տեղ/ пр. лист	Անկյունակ 90° Φ32մմ УГОЛОК 90° Φ32	հատ / шт	20,00	0,184	3,689
22	ինֆ տեղ/	Եռաբաշխիչ Φ20*20*20մմ ТРОЙНИК Φ20*20*20	հատ / шт	6,00	0,094	0,562

	пр. лист					
23	ինֆ տեղ/ пр. лист	Եռաբաշխիչ Φ25*20*25մմ ТРОЙНИК Φ25*20*25	հատ / шт	26,00	0,120	3,110
24	ինֆ տեղ/ пр. лист	Եռաբաշխիչ Φ32*20*32մմ ТРОЙНИК Φ32*20*32	հատ / шт	22,00	0,238	5,232
25	ինֆ տեղ/ пр. лист	Եռաբաշխիչ Φ32*32*32մմ ТРОЙНИК Φ32*32*32	հատ / шт	4,00	0,223	0,894
26	շուկա/р ынок	Խողովակի պատի հետ ամրացման դետալ d=20մմ Монтажный элемент со стенкой трубы d = 20 мм	հատ / шт	86,00	0,030	2,603
27	շուկա/р ынок	Խողովակի պատի հետ ամրացման դետալ d=25մմ Монтажный элемент со стенкой трубы d = 25 мм	հատ / шт	172,00	0,036	6,197
28	շուկա/р ынок	Խողովակի պատի հետ ամրացման դետալ d=32մմ Монтажный элемент со стенкой трубы d = 32 мм	հատ / шт	70,00	0,060	4,197
29	16-261	Պոլիպրոպիլենային խողովակի մոնտաժում PN 10, d=20x3,4մմ /սնուցող ջրագիծ/ Монтаж полипропиленовой трубы PN 10, d = 20x3,4 мм	գմ/пм	15,00	3,891	58,372
30	ինֆ տեղ/пр. лист	Անկյունակ Պոլիպրոպիլենային, 90° d=20մմ Уголок полипропиленовый, 90° d = 20 мм	հատ / шт	10,00	0,062	0,620
31	ինֆ տեղ/пр. лист	Փական պոլիպրոպիլենային d=20մմ Вентил полипропиленовый d = 20мм	հատ / шт	2,00	1,580	3,159
32				2,00	1,441	2,882

	ինֆ տեղ/пр. лист	Անցում ամերիկանկա d=20մմ Американка d = 20мм	հատ / шт			
33	46-100	Բետանե հատակի քանդում խողովակների անցման համար Снос бетонного пола	մ3 /м3	0,48	17,156	8,235
34	6--1	Բետանե հատակի վերականգում /բետոնացում/ Снос бетонного пола	մ3 /м3	0,30	40,887	12,266
35	Е46--47	Անցքերի բացում միջնորմներում Пробивка отверстий в перегородках	տեղ/мест	8,00	4,869	38,954
36	Е46--50	Անցքերի բացում քարե պատերում Пробивка отверстий в стенах	տեղ/мест	16,00	6,276	100,410
37	Е46-171	Անցքերի բացում միջհարկային ծածկերում Пробивка отверстий в бетонных перекрытиях	տեղ/мест	1,00	1,799	1,799
38	46-73	Անցքերի փակում պատերում և միջնապատերում Закрытие отверстий в перегородках и стенах	մ3 /м3	0,05	154,074	7,741
					Ընդամենը	***3924,544***
					տոկոսը ամբողջի համար	***30,52%***
		ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍ / ЭЛЕКТРИЧЕСКАЯ ЧАСТЬ				
1	8-603-1 к=0.4	Լուսատուների ապամոնտաժում Демонтаж светильников	հատ / штук	18,00	0,055	0,993
2	8-591-2 к=0.6	Անջատիչների ապամոնտաժում Демонтаж выключателей	հատ / шт	9,00	0,202	1,816

3	8-591-7 к=0.6	Վարդակների ապամոնտաժում Демонтаж штепселей	հատ / шт	18,00	0,222	3,991
4	8-612-7	Բաշխիչ վահան 24 տեղ պլաստմասե Пластмассовый распределительный щит на 24 мест	հատ / шт	1,00	26,463	26,463
5	8-525-1	Միաֆազ ավտոմատ անջատիչ 1P/C/63A Однофазный автоматический выключатель 1P/C/63A	հատ / шт	1,00	8,901	8,901
6	8-525-1	Միաֆազ ավտոմատ անջատիչ 1P/C/25A Однофазный автоматический выключатель 1P/C/25A	հատ / шт	9,00	5,250	47,246
7	8-591-7	Վարդակ ներկառուցվող մեկ տեղանոց Розетка штепсельная одинарная	հատ / шт	33,00	2,291	75,591
8	8-525-1	Միաֆազ ավտոմատ անջատիչ 1P/C/10A Однофазный автоматический выключатель 1P/C/10A	հատ / шт	9,00	3,808	34,273
9	8-525-1	Միաֆազ ավտոմատ անջատիչ 1P/C/16A Однофазный автоматический выключатель 1P/C/16A	հատ / шт	1,00	4,385	4,385
10	8-591-2	Անջատիչ միաստեղ Выключатель одинарный	հատ / шт	4,00	2,016	8,063
11	8-591-10	Անջատիչ երկստեղ Выключатель двухместный	հատ / шт	8,00	2,802	22,414

12	10-775-2	Բաժանարար տուփ Распределительные коробки	հատ / шт	18,00	1,183	21,296
13	10--975--8	Տուփ վարդակների և անջատիչների համար Коробка для розеток и выключателей	հատ / шт	45,00	1,507	67,831
14	8-594-1	Պլաստիկ սալերով առաստաղի LED լուսատու 9Վտ ներկառուցվող Светодиодный потолочный светильник /для пластиковыми панелями/ 9Вт встроенный	հատ / шт	1,00	3,945	3,945
15	8-594-1	Գիպսոկարտոնե առաստաղի LED լուսատու 12Վտ ներկառուցվող Потолочный светильник гипсокартона светодиодный 12Вт встраиваемый	հատ / шт	39,00	3,945	153,842
16	8-400-1	Պղնձե մալուխ ВВГнг FRLS 3x1.5մմ2 Медный кабель ВВГнг 3x1.5мм2	գմ / пм	450,00	1,968	885,723
17	8-400-1	Պղնձե մալուխ ВВГнг FRLS 3x2.5մմ2 Медный кабель ВВГнг 3x2.5мм2	գմ / пм	552,00	2,162	1193,600
18	8-400-1	Պղնձե մալուխ ВВГнг FRLS 3x4մմ2 Медный кабель ВВГнг 3x4мм2	գմ / пм	204,00	2,467	503,189
19	8-400-1	Պղնձե մալուխ ВВГнг FRLS 3x10մմ2 Медный кабель ВВГнг 3x10мм2	գմ / пм	30,00	3,937	118,099
20	2ուկա	Ճկախողովակ գոֆրե ՊՆԴ Φ20 Труба гофрированная пнд Φ20	գմ / пм	432,00	0,649	280,170

21	շուկա	Ճկախողովակ գոֆրե ՊՆԴ Φ25 Труба гофрированная пнд Φ25	գմ / пм	204,00	0,937	191,104
22	21-43	Ակոսների իրականացում պատերի մեջ Пробивка борозд для кабеля	գմ/пм	552,00	0,496	273,550
23	E46-47	Անցքերի բացում քարե պատերում Пробывка дыр в стенах	տեղ / мест	4,00	4,869	19,477
24	11-178	Ակոսների սվաղում գաջով Заделка борозд гажевым раствором	մ2 / м2	27,60	2,873	79,304
25	23-77 Գնաց 3	Շին աղբի կուտակում, դուրս բերում շենքից, բարձում ա/մեք վրա և տեղափոխում Сбор строй мусора, вывоз из здания, погрузка на самосвалы и вывоз	տ / т	1,20	5,658	6,789
					Ընդամենը	***4032,054***
					տոկոսը ամբողջի համար	***31,35%***
		ՍԱՐՔԵՐ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ/ПРИБОРЫ ОБОРУДОВАНИЕ				
1	E18-71	Պատի ջեռուցման կաթսայի տեղադրում, փակ այրման, 28 կՎտ Монтаж котла настенного отопления, закрытого горения, с дымоходом, 28 кВт	լրակազմ	2,00	386,538	773,076
2	E18-165	Ջեռուցման շրջանառու պոմպի տեղադրում УСТАНОВКА НАСОСОВ ЦЕНТРОБЕЖНЫХ	հատ / шт	2,00	46,748	93,496
3	8-594-1	Պլաստիկ սալերով առաստաղի LED լուսատու 9Վտ ներկառուցվող Светодиодный потолочный светильник	հատ / шт	1,00	5,157	5,157

		/для пластиковыми панелями/ 9Вт встроенный				
4	8-594-1	Գիպսոկարտոնե առաստաղի LED լուսատու 12Վտ ներկառուցվող Потолочный светильник гипсокартона светодиодный 12Вт встраиваемый	հատ / шт	39,00	7,105	277,096
					Ընդամենը	***1148,824***
					կոկոսը ամբողջի համար	***8,93%***

Ընդամենը / Итого	***11711,170***
Սարքեր/ սարքավորումներ/ Оборудование	***1148,824***
ԱԱՀ 20% / 20% НДС	2342,234
Ընդամենը / Итого	***14053,404***
Ընդամենը /ներառյալ սարքեր/սարքավորումները/	**15202,229**

Մասնակիցը պետք է ունենա սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման օրենսդրությամբ նախատեսված իրավասություն (<<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքով նախատեսված լիցենզիաներ և ներդիրներ), ինչպես նաև պետք է բավարարի նախագծով աշխատանքային ռեսուրսների և մեքենա-մեխանիզմների համար սահմանված նվազագույն պահանջներին (եթե այդպիսիք նախատեսված են).

Չափաբաժին 3-րդ - ներդիրներ՝ բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ (03.04), ջերմագազամատակարարում և օդափոխություն (օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր, ջերմամատակարար ման և գազամատակարարման համակարգեր) (03.06), էլեկտրամատակարարում (էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատակարարման համակարգեր, ֆոտովոլտային և հողմաէներգետիկ կայաններ) (03.05), 1-ին, 2-րդ կամ 3-րդ դաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Մասիսի համայնքապետարան
ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900 432 131 036
ՀՎՀՀ 04240324

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՎԷՀ» ՍՊԸ
Արարատի մ., ք. Վեդի, Ն. Ստեփանյան 19
ԱԿԲԱ Բանկ ԲԲԸ
Հ/Հ 220123331195000
ՀՎՀՀ 04234908

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԴԸ ԲԵՍՏ ՇԻՆ» ՍՊԸ
գ. Գոռավան, Վ. Սարգսյան 49
«Արդշինբանկ» ՓԲԸ, Նոր Նորք մ/ճ
Հ/Հ 2472401738040000
ՀՎՀՀ 04230433

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված թիվ 2
« 03 » հուլիսի 2025թ. կնքված
ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/7-3 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

կապալային աշխատանքների կատարման

Հ/Հ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
3	Մասիս համայնքի Հայանիստ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի մասնակի վերանորոգման և ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքներ	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 60 օրացուցային օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Մասիսի համայնքապետարան
ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900 432 131 036
ՀՎՀՀ 04240324

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՎԷՀ» ՍՊԸ
Արարատի մ., ք. Վեդի, Ն. Ստեփանյան 19
ԱԿԲԱ Բանկ ԲԲԸ
Հ/Հ 220123331195000
ՀՎՀՀ 04234908

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԴԸ ԲԵՍՏ ՇԻՆ» ՍՊԸ
գ. Գոռավան, Վ. Սարգսյան 49
«Արդշինբանկ» ՓԲԸ, Նոր Նորք մ/ճ
Հ/Հ 2472401738040000
ՀՎՀՀ 04230433

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 03 » հուլիսի 2025թ. կնքված
ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/7-3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
3	45221142	Մասիս համայնքի Հայանիստ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի մասնակի վերանորոգման և ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքներ							… %	… %	… %	… %	… %	… %	… %

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Մասիսի համայնքապետարան
ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900 432 131 036
ՀՎՀՀ 04240324

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՎԷՀ» ՍՊԸ
Արարատի մ., ք. Վեդի, Ն. Ստեփանյան 19
ԱԿԲԱ Բանկ ԲԲԸ
Հ/Հ 220123331195000
ՀՎՀՀ 04234908

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԴԸ ԲԵՍՏ ՇԻՆ» ՍՊԸ
գ. Գոռավան, Վ. Սարգսյան 49
«Արդշինբանկ» ՓԲԸ, Նոր Նորք մ/ճ
Հ/Հ 2472401738040000
ՀՎՀՀ 04230433

/ստորագրություն/
Կ.Տ